# ՄՈՒՐԱՑԿԱՆԸ

*(Հայ ժողովրդական լեգենդա ըստ Զերազի)*

*Աշխարհում վաղուց տխո՜ւր, չարատանջ*
*Մի մուրացկան էր շրջում դռնէ դուռ.*
*Բոկոտն աղքատ, դէմքով վշտահար*
*Ողորմութիւն էր մարդկանցից խնդրում։*

*Մարդիկ ողորմում էին միմիայն*
*Գեղեցիկ կանանց լոկ ներկայութեամբ.*
*Փառասէր կանայք ողորմում էին՝*
*Սիրած մարդկանց մօտ սնափառութեամբ...*

*Բայց այդ միեւնոյն կանայք ու մարդիկ*
*Երբ զատ-զատ նոխա տեսնէին խեղճին*
*Արհամարհական հայեացք դէմքերին*
*Մուրացկի մօտից հեռո՜ւ կերթային...*

*Երբ հարուստները կանգնած մայդանում*
*Հեռուից տեսնէին հէգ մուրացկանին*
*Բարձր զիլ ձայնով ջերմ կըկանչէին*
*Եւ ի ցոյց մարդկան կոպէկ կըտային։*

*Բայց երբ միեւնոյն այդ հարուստները*
*Տեսնէին նրան դատարկ փողոցում*
*Զիլ կգոռային-կորի՛ր ձրիակեր*
*Դո՛ւ, շո՜ւն անիրա՛ւ, աշխատի՛ր ու կե՛ր...*

*Նոյնը կանէին եւ «սուրբ» տէր հայրեր*
*Մարդկանց մօտ նրան գրօշ կըտային*
*Բայց հէնց ո՛ր ընկան մի դատարկ փողոց՝*
*Տեսան թշուառին, հեռո՜ւ կերթային...*

Միայն մանուկներ անարատ հոգով
Ձեռն ողորմութիւն կը տային սրտանց,
Կը տուին առանց սնափառութեան
Եւ մուրացկանը օրհնում էր նրանց.

Տանջուած, վշտահար նա մրմնջում էր
«Թողէ՛ք այդ մանկունք գան ինձ մօտ ազատ
«Ո՜, մի արգելէք գեղ հոգիներին.
«Դրանց նմաններինն է եղեմն անարատ...

Խեղճ մուրացկանը մի տան դուռ ծեծեց.
Տիրուհին-մի գեղ կին, տան դուռը բացաւ
Խոնջած ներս մտաւ ողջունեց, նստեց
Քոյրիկի հարցին,—ծարա՜ւ եմ-ասաց.

Կինը ջուր հանեց բակի ջրհորից
Եւ սառ կուլայով տուաւ մուրացկին.
Նա քլքլացնելով երկա՜ր ջուր խմեց
Քոյրիկի հարցին,-քաղցա՜ծ եմ--ասաց:

Կինը հաց ու թուզ բերաւ քաղցածին
Աղքատը կերաւ. բայց էլի՛ նստեց.
Է՛լի ի՞նչ կուզես, հարցրաւ տիրուհին
—Մի սիրոյ համբոյր ինձ շնորհ արա...

Կինը մենակ էր. իր ամուսինը
Դուկան էր գնացել. նա հաւատարիմ
Սիրած ամուսնուն. խղճալով խեղճին՝
Ամօթից կարմրած թուշը դէմ արաւ...

Բայց մուրացկանը ո՛չ համբուրելու
Մօտեցաւ նրա սիրո՜ւն ականջին,
Մրմնջաց հանդա՜րտ.- Կի՛ն, գթութիւնդ
Առջեւդ է բանում երկնքի դռներ...

Ասաց, ամպի մէջ աներեւոյթցաւ.
Դա Ք ր ի ս տ ո ս ն էր, ցնցոտիների
Տակ թագնուած Փրկիչն, շրջում էր աշխարհ.
Գիտնալու թիւը քրիստոնեաների:

Յ. ԽԱՆԼԱՐԵԱՆ